



ԽՕԽՔ 1500ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏԱՌԵՐՈՒ ԳԻՒՏԻՆ

ԵՒ 400ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՅՈՒՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ

Այսօր ամբողջ Տոհմայիններ՝ Կորեկեան տօնաձանգէս կազմելու հանդիսացած են 1500ամեակ Հայ այբուբենի գիւտին, նոյնպէս 400 ամեակ Հայկական Տպագրութեան սկզբնաւորութեան: Այսօր փառաւորեալ յիշատակութիւն է Հայ դպրութեան, Հայ իմացականութեան, և Հայ քաղաքականութեան, Ազգերու դասակարգին մէջ: Այսօր խանդավառութեան՝ և մեծ ցնծութեան տօնախմբութիւն է, աշխարհի մէկ ծայրէն մինչև միւսն, տիեզերքին հինգ մասերուն վրայ բնակող հա-

մազգայիններուն, աօն կրկնակի Յօրեղեաններու, կրկնակի հռչակելի յառաջադիմութիւններու, կրկնակի աննման պարծանքներու :

Իրաւամբ կազմակերպուած է հանդիսութիւնն, բնդհանուր ազգե-
րուն առջև, և թէ պարծանքով կրանձայ Հայութիւնն, այսպիսի պան-
ծառիթ եղելութիւններու առջև. եթէ Հայազգի սրասմութիւնն զարգա-
ւեալ է գիւցազնական մեծ զրուագներով և արարուածներով, ուր
կցոյտնայ Հայկազնեան փառքն, միթէ՞ նուազ փառաւոր է Հայազգի
Գպրութիւնն և մասնագրութիւնն, որ կգարգարեն և կփայլիցնեն մա-
տենադարաններն, և կազնուացնեն Հայութիւնն լուսաւորեալ ժողո-
վուրդներու առջև. իրեն ունեցած փայլուն անցեալովն և ոսկեղէն գա-
րովն, շնորհիւ Մեծին Մեսրոպայ և Մեծին Սահակայ, Էղիշէի, Կորիւնի,
Գաւթի Անյաղթի և Մովսէսի Խորենացոյ, Կեցցի Մեծն Մեսրոպ, որ
հնարած Այբուրեհնովն Հայութեան կենդանութեան շարժառիթ եղաւ.
Կեցցեն համանգամայն այն հռչակաւոր ոսկեղէն գարու սրբազան հեղի-
նակներն, որ Հայ բարբառն մեզ յեանորդներուս կանոնաւորութեամբ
աւանդեցին :

Հայարարբառ լեզուին ճօխութենէն և հնութենէն, ոչ միայն կոզ-
տուին առհմայիններն, այլ և իսկ օտարական զրագէտներ, որոնք ծա-
նօթ են մեզ հետեալ անուններով Լուրաէ, Քարէլլէթթի, Լանկլուա,
Գեգա, Մորթման, Կոթշմիտ, Մաքլիւր, Կեւցիւր, Քարսղ, Մարբուարտ,
Տը Լակարտ, Քիյար, և այլն Հայազէտներ, որոնք զիտցան օգտուիլ մեր
լեզուէն. գանձ էր մեր գրականութիւնն, Եւսեպիոսի Հայերէն թարգ-
մանութիւնն կրահուէր երբ լաւիներէնն կորսուած էր :

Հայկական զրիւս օժանդակութեամբ մեր Ս. Թարգմանիչներն
ստեղծեցին Հայաստանի մէջ գիտութեան կաճառն, և նոյն միջոցով
կատարելագործուեցաւ ազգային բարբառն և թէ փայլունութեան գա-
զաթնակէտն հասաւ, Ս. Թարգմանիչներու ըրած Ս. Կրքին թարգմա-
նութիւնն այնքան բնաիր եղաւ, որ թագուհին կոչուեցաւ միւս թարգ-
մանութիւններուն, որուն ամբողջութեան մէջ յատակութիւն և գերա-
զանցութիւն կարտափայլի :

Ս. Թարգմանիչներու ջանքն և գործունէութիւնն և գերազանց
տքնութիւնն, ոչ միշտ նոյնպէս փայլուն հետեութիւն և շարունակու-
թիւն ունեցաւ, երբեմն ալ նսեմացաւ, այլ ոչ արմատովն, վասն զի
ժամանակ ժամանակ Հայ հորիզոնին վրայ երեւցան մէկ քանի աստղեր.
յեապ անհետացան նոյնպիսի բացառիկ աստղերն, և մթութիւնն անազ-
նապէս սիրեց, զարեւր յաջորդեցին, որոնց մէջ առհմայիններն կանգի-
տանային, թէ Ազգն ունեցած էր արդէն բնաիր գպրութիւնն և ոսկեղէն
զարն, մինչև ժ՛՛. գար :

Հայկական հպարտութեան սկիզբն տեղի ունեցաւ 1513ին և
խանձարուրն եղաւ Վենետիկ, նոյնպէս Ամսդերտամ, Լիւսանոյ, Հաովմ
և Մարսելլ, գլխաւոր կեղբոսներ. ուր կոթթէնպերկեան արուեստն հա-
յացաւ, և Հայ կոթթէնպերկն Յակովբ, գեղեցիկ և մտեմ գաղափարն

ունեցաւ արուեստն յգանալու, Արեւելեան Ազգերու մէջ, առաջինն եղաւ Հայութիւնն, որ կանխեց միւսներէն առաջ օգտուելու յառաջագիմութենէ, և զարգանալու արեւմտեանց գծած շաւղին մէջ:

Անուրանալի է Վանականութեան և Կիլիկիացականութեան մատուցած բարիքն ընդհանուր Ազգաց մէջ, և ունեցած դերն. մեր մէջ ալ զարձեալ վանականութիւնն էր, որ իր մեծ դերն ունեցաւ, ՎՔ զարն հասաւ յաջորդելու իր նախորդ զժբազ զարերուն, արձանացնելով Մխիթար Աբաստացին. Մխիթար Արրայն արժանի է մեծ կոչուելու և հեղինակ լուսաւորութեան Հայութեան մէջ, գտիչ ոսկեղէն զարու ճամբուն, ներշնչեալ Ս. Թարգմանիչներէն, Հայութիւնն մեծապէս կը պարտի բարեխիշտատակն մեծին Մխիթարի. պարտաւորութիւնն է կոթողներ կանգնելով երախտագրաութեամբ անոր յիշատակն յաւերժացնելու:

Գեղեցիկն Վենետիկ արդէն Հայութեան հետ կապուած թէ գաղթականութեան, և թէ Տպագրութեան կապակցութեամբ, իսկ նախապէս ծովերու թագուհի եղող իրեն հզօր Հասարակապետութեամբ, Կիւլիկիացոց հետ միշտ բարեկամ, ողջագոյր հիւրընկալ և ասպնջական եղաւ Մեծին Մխիթարայ, և նա օգտուած այսպիսի սիրալիր հիւրընկալութենէ Ս. Վազար կոչուած կղզեակին մէջ հիմնադրեց իրեն մայր վանքն, հետու վանոցներէ և հարստահարութենէ, թէ և Հայրենիքէն հետու, այլ ապահով, ուր ահեղ ալիքներ զարնուած յարասե կիշրին: Ս. Վազարն վիճակեցաւ կիզրոն բլլաւ Հայաստանու ուսումին տարածման և ընդհանրացման. մեծին Մխիթարայ աշակերտներն և հաստատած միաբանութիւնն, մի և նոյն ուղղութեամբ ոսկեղէն զարուն հետեղ եղան, հետագօտեցին Ս. Թարգմանչաց ոգին և աւիւնն. և անով ողևորեցան, լեզուն ոսկիի սկէս քովի մէջ գտեցին:

Մխիթարեան Միաբանութիւնն երկդարեան շարունակուած աշխատութեամբ Ս. Թարգմանչաց գործին գործակիցներ եղան, անոնց հրատարակած մատեաններն անհամար են, ոչ չափ ունին և ոչ թիւ, և կլեցնեն մտտեհաղարաններ:

Տպարաններն Հայոց մէջ բովանդակ ընդհանրացած են, և ամէն տարի բազմահասոր Հայկական արտադրութիւններ կհրատարակուին, և լոյս կտանեն, և կմշակին հայաստանու լեզուն, որ կապրի շարունակ կհնասունակ կորստով, անմահ է այն, բնաւ չմեռնիր. ապագայ զարեր նոր Յորեկեաններ պիտի կազմակերպեն Հայկական տառերու գիւտին և թէ տպագրութեան:

ՄԵՍՐՈՊ ՎՐԳՊՏ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ